Տ. ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(Նշան սարկավագ)

Ծնվել է 1973 թ. հունիսի 4-ին Արարատի մարզի Ավշար գյուղում:

1979-1990 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում:

1990 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարան:

1996 թ. մայիսի 19-ին Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գեր. Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

Նույն թվականի հունիսին ավարտել է Հոգևոր Ճեմարանի վեցամյա դասընթացը:

1996-97 թթ. աշխատել է Վեհարանում որպես քարտուղար:

1997 թ. հոկտեմբերի 30-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում պաշտպանել է ավարտական՝ «Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի 1974-1983 թթ.» վերտառությամբ, և ստացել լավ գնահատական:

1997 թ. դեկտեմբերի 14-ին, ձեռամբ Եգիպտոսի հայոց թեմի Առաջնորդ Գեր. Տ. Զավեն արքեպս. Չինչինյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել և օծվել է կուսակրոն քահանա: